# ԱՀԱ ՔԵԶ ՄՈՏ Է ԳԱԼԻՍ ՔՈ ԹԱԳԱՎՈՐԸ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Մտս. 21.4-9

*1 Երբ մոտեցան Երուսաղեմին ու եկան Բեթփագե՝ Ձիթենյաց լեռան մոտ, այդ*
*ժամանակ Հիսուսը երկու աշակերտի ուղարկեց, 2 Գնացե՛ք ձեր դիմացի գյուղը և*
*այնտեղ անմիջապես կգտնեք մի կապած էշ, ավանակն էլ հետը: Արձակե՛ք, ինձ մո՛տ*
*բերեք: 3 Եթե որևէ մեկը ձեզ ինչ-որ բան ասի, ասե՛ք, որ դրանք պետք են Տիրոջը, և նա*
*իսկույն դրանք կուղարկի:*

*4 Բայց այս ամենը եղավ, որպեսզի իրականանար մարգարեի միջոցով ասված խոսքը.*
*5 «Սիոնի դստերն ասե՛ք. Ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը՝ հեզ, էշին ու քուռակին*
*հեծած (Զաք. 9.9)»: 6 Աշակերտները գնացին ու արեցին այնպես, ինչպես Հիսուսը*
*նրանց պատվիրեց. 7 Էշն ու ավանակը բերեցին, իրենց հագուստները դրանց վրա*
*գցեցին, և Հիսուսը դրանց վրա նստեց: 8 Եւ ժողովրդի միջից շատերն իրենց*
*հագուստները փռում էին ճանապարհին. ուրիշներն էլ ծառերից ճյուղեր էին կտրում ու*
*ճանապարհին փռում: 9 Եվ առջևից ու հետևից գնացող բազմությունը բացականչում էր*
*ու ասում. «Օվսաննա՜ Դավթի Որդուն (եբր. Սաղ. 118.25), օրհնյա՜լ է Տիրոջ անունով*
*եկողը (Սաղ. 118.26). Օվսաննա՜ Բարձրյալին»: Երբ Հիսուսը Երուսաղեմ մտավ,*
*ամբողջ քաղաքը ցնցվեց: Հարցնում էին. «Ո՞վ է սա»:*

## I. ՀԻՍՈՒՍԸ ԵԿԱՎ ՈՐՊԵՍ – ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ: JESUS CAME AS A KING OF PEACE.

*ԶԱՔԱՐԻԱ 9.9 – Մեծապես ուրախացի՛ր, ո՛վ Սիոնի դուստր, ցնծությամբ աղաղակի՛ր, ո՛վ Երուսաղեմի դուստր, **<u>ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը</u>.** նա արդար ու փրկագործ է, **հեզ և էշի վրա հեծած**, էշի ձագի՝ ավանակի վրա:*

***Զաքարիա (մ.թ.ա. 520–518 թթ.)***

***Ինչո՞ւ էշի վրա հեծած: Մեսիական մարգարեություն***

*Ծննդոց 49.10-11 Չի պակասելու իշխանությունը Հուդայից, ոչ էլ օրենսդիրը՝ նրա երանքից, մինչև որ գա Սելովը. և նրա՛ն են հնազանդվում ժողովուրդները: Նա իր ավանակին որթից կկապի և ազնիվ որթից՝ իր **<u>էգ էշի քուռակին</u>**. իր պատմուճանը կլվա գինով և իր հանդերձը՝ խաղողի արյամբ:*

*3 Թագավորաց 1.38-39 – Եվ Սադովկ քահանան, Նաթան մարգարեն ու Հովիադայի որդի Բանեան և քերեթիներն ու փելեթիները եկան, Սողոմոնին նստեցրին Դավիթ թագավորի **<u>ջորու վրա</u>** և նրան տարան Գեհոն: Եվ Սադովկ քահանան յուղի եղջյուրը վերցրեց խորանից, օծեց Սողոմոնին, և փող հնչեցրին, և ամբողջ ժողովուրդը բացականչեց. **«Կեցցե՜ Սողոմոն արքան»:***

***(Ադոնիան ուզում է թագավորել):***

***Ահա Սողոմոնից էլ մեծն է այստեղ:***

*9 Եվ առջևից ու հետևից գնացող բազմությունը բացականչում էր ու ասում.*
*«Օվսաննա՜ Դավթի Որդուն (եբր. Սաղ. 118.25), օրհնյա՜լ է Տիրոջ անունով եկողը*
*(Սաղ. 118.26). օվսաննա՜ Բարձրյալին»:*

## II. ՅԻՍՈՒՍԸ ԵԿԱՎ ՈՐՊԵՍ – ՅԱՂԹԱՆԱԿԱԾ ԹԱԳԱՎՈՐ:
## JESUS CAME AS THE VICTORIOUS KING

***Երկրորդ բանը, որ Յիսուսը հայտնեց Երուսաղեմ մտնելով, այն է, որ նա հաղթական թագավորն է:***

*Զաքարիա 9.9 – ...ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը.* ***նա արդար ու փրկագործ է,*** *հեզ և էշի վրա հեծած, էշի ձագի՝ ավանակի վրա:*

*Յովհաննես 12.13 – արմավենու ճյուղեր վերցրեց և նրան ընդառաջ ելավ՝ աղաղակելով. «**Օվսաննա՜** (եբր. Սաղ. 118.25), օրհնյա՜լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով (Սաղ. 118.26), **Իսրայելի թագավորը**»:*

***«Օվսաննա». Նշանակում է Փրկության աղաղակ. – փրկել, փրկվել, և ազատվել:***

*Սաղմոս 118.24-29 – 24 Սա այն օրն է, որ Տերն արարեց. թող ցնծանք և ուրախ լինենք նրանում: 25 **Օ՜, Տե՛ր, փրկի՛ր**, ո՜, Տե՛ր, հաջողությո՛ւն տուր: 26 Օրհնյա՜լ է նա, որ գալիս է Տիրոջ անվամբ. օրհնում ենք ձեզ Տիրոջ տնից: 27 Տերն է Աստվածը և լույս է ցույց տալիս մեզ. ...28 Դու ես իմ Աստվածը, և ես գոհանում եմ քեզնից, ո՛վ իմ Աստված, ես պիտի պանծացնեմ քեզ: 29 Գոհացե՛ք Տիրոջից, որ բարի է, որ հավիտյան է նրա ողորմությունը:*

## III. ՅԻՍՈՒՍԸ ԵԿԱՎ ՈՐՊԵՍ – ՅԵԶ ԹԱԳԱՎՈՐ:
## JESUS CAME AS THE GENTLE KING

*Զաքարիա 9.9 – ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը. նա արդար ու փրկագործ է,* ***հեզ և էշի վրա հեծած,*** *էշի ձագի՝ ավանակի վրա: Մեծապես ուրախացի՛ր, ո՛վ Սիոնի* ***դուստր****, ցնծությամբ աղաղակի՛ր, ո՛վ* ***Երուսաղեմի դուստր:***

***Յիսուսն իր հեզությամբ ջախջախեց ՅՌՈՄԻ կայսրությունը և կառքերը:***

*Զաքարիայի մարգարեության այս երկու համարների մեջ ամփոփ նկարագրված է մեր Տեր Յիսուս Քրիստոսի **առաջին և երկրորդ գալուստները:** Առաջին գալուստը հեզությամբ և խոնարհությամբ էր, երբ Յիսուս Քրիստոս իր զոհաբերությամբ փրկություն պարգևեց մարդկությանը և վերականգնեց աստվածային արդարությունը: Նրա երկրորդ գալուստը պիտի լինի զորությամբ և փառքով: Յիսուսը պիտի փշրի բոլոր պատերազմի զենքերը ազգերի միջից և Իր խաղաղությունը հաստատի ամբողջ տիեզերքում. «ծովից մինչև ծով և գետերից մինչև երկրի ծագերը»:*

*Ավետարանում Տեր Յիսուս Քրիստոս նկարագրում է իր երկրորդ գալուստը՝ զորությամբ և փառքով (Մատթեոս 24.30; 26.64), իսկ Յայտնության գրքում արդեն (19.11-16) տեսնում ենք, թե ինչպես է Տեր Յիսուս վերադառնում և այս անգամ ոչ թե ավանակի, այլ պատերազմող սպիտակ ձիու վրա նստած՝ կործանելու Իր բոլոր թշնամիներին: Այդ ժամանակ համայն մարդկությունը պիտի կանգնի Նրա առաջ, քանզի Նա է «Թագավորների Թագավորը և Տերերի Տերը» (Յայտնություն 19.16):*

*Եսայի 62.11-12 Ահա թե Տերն ի՛նչ լսել տվեց մինչև երկրի ծայրերը. «Ասացե՛ք Սիոնի դստերը. **Ահավասիկ գալիս է քո Փրկիչը,** ահավասիկ ն րա վարձը նրա հետ է, և նրա հատուցումը՝ նրա առաջ»: Նրանց պիտի կոչեն «Սուրբ ժողովուրդ, Տիրոջ փրկվածներ», և քեզ պիտի կոչեն «Փնտրված և չլքված քաղաք»:*

> *Զաքարիա 9.10 – Եվ Եփրեմից բնաջինջ պիտի անեմ կառքը և ձին՝ Երուսաղեմից: Եվ պիտի կոտրվի պատերազմի աղեղը, և նա խաղաղություն է խոսելու ազգերին, և նրա իշխանությունը ծովից ծով է լինելու և գետից մինչև երկրի ծայրերը:*

**Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ:**